«նյութական զորությամբ անմասն են մնում ազգի կյանքին»[1]: Նա զգուշացնում է, որ հակառակ դեպքում, եթե երկրամասի վարչական բաժանումը իրականացվի տվյալ ազգային տերիտորիայում «փոքրամասնություն ընդունելով» ու «փոքրամասնություն թողնելու» սկզբունքով, ապա սկիզբ է դրվելու ազգային այնպիսի քաղաքականության, որը ենթադրում է փոխադարձ հսկողություն, որպեսզի «յուրայինը որևէ խնդրում չբռնադատվի օտար հորիզոնի տակ և միաժամանակ ինքը բռնադատող չդառնա իր սահմանների մեջ»՝ և փոխադարձ անվստահություն՝ ստեղծելով «թունավոր մթնոլորտ ազգերի համար և նրան զարգացումն ու միտքը հանապազ բևեռած պահե ազգային հարցի սուր անկյունների վրա: Ղարաբաղին վիճակված էր հենց այդ ճակատագիրը: Վերլուծելով Հայաստանի ու Ղարաբաղի տնտեսական ամբողջության հիմքերը՝ Դ.Անանունը եզրակացնում է, թե «Ղարաբաղը ամբողջական Հայաստանից դուրս՝ դա խոց է ...Եթե Ադրբեջանում խելքը գլխին քաղաքագետներ լինեին, նրանք ամենից առաջ պիտի հրաժարվեին Ղարաբաղից: Եթե Հայաստանում հայրենի՛քի հավաքման համոզված գործիչներ կան՝ նրանք օրն ի բուն պիտի խորհեն Ղարաբաղի մասին: Պայքարին է վերապահված լուծելու հարցը և հանելու Ղարաբաղի հայությունը ...բաբելոնյան գերությունից»[2]:

Դավիթ Անանունի «տնտեսական ամբողջությունը» ենթադրում է կառավարման միասնական համակարգ, որը պիտի հաստատուն կենսապայմաններ ապահովեր ազգային ընդհանուր հանրության ու հաստատությունների կենսագործունեության ու հարատևության համար:

ՄԱՐԻՆԵ ԱՂԱՅԱՆ
ՀՊՃՀ տ.գ.թ., դոցենտ

ՀԱՅ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

XIX դարի 70-ական թվականներին հայ իրականության համար սկսվում է մի նոր պատմաշրջան: Կապված երկրամասի կապիտալիստական փոխակերպության հետ՝ հայ տեսական միտքը կանգնում է քննության առջև: Առաջադրվում են հասարակական ներհակությունները հարթելու և դրա սոցիալական առաջընթացն ակնկալող ամենատարբեր նախագծումներ, որոնցից մեկը ինքնօգնության սկզբունքներով արտադրական ու սպառողական կոոպերացիաների ստեղծումն է:

XIX դարի վերջին քառորդում կապիտալիստական հարաբերությունների զարգացումը հանգեցնում է մանրգյուղացիական տնտեսության քայքայմանն ու գյուղի սոցիալական շերտավորմանը: Վերջինիս հաղթահարման համար չափազանց գայթակղիչ է դառնում կոոպերացիան, որի «հրաշագործ» և «փրկարար» հնարավորությունների մասին բազմիցս սկսել էին գրել հայ մտածողները[3]: Սոցիալական հարցի քննությունը սուր կետի վրա էր դրվել. այն, որքան պատմական, նույնքան էլ համամարդկային էր: Պատահական չէ, որ ժամանակի վերլուծաբանները տնտեսական զարգացման կարևոր պայմաններից մեկը համարում էին ընկերական ոգու դաստիարակությունը. «Ամեն մի լուսավորված ու քաղաքակրթված երկրի ու ազգի մեջ, երբ անհատական ուժը բավականանում չի մի գործ առաջ տանելու ու գլուխ ածելու համար,

---

[1] Դ.Անանունը սույն դիտողությունները կատարել է «Ղարաբաղ» հոդվածում, որը լույս է տեսել «Հայաստանի կոոպերացիա» ամսագրի՝ 1920թ. օգոստոսի համարում: Արտատպվել է «Գրական թերթի» 1989թ. N 2-ում, որտեղից էլ կատարվել են հղումները:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1866, N 1, 1882, N 21, «Նոր-Դար», 1890, N 135, 1895, N 103, 152, 155, 1897, N 9, 1898, N 212, «Գյուղատնտես», 1909, N 2, 14, 1916, N 8:

միանում են մի քանի անհատներ, կազմում են մի ընկերություն և ապա միասիրտ ու միակամ սկսում են գործել ու աշխատել այդ գործի կատարելության ու առաջադիմության համար»: Այլ խոսքով, «Մեր ազգի համար անհրաժեշտ են հողագործական ու արհեստական ընկերությունների գոյությունը»[1], բայց դրա համար, նկատում է Գ.Արծրունին, ամենից առաջ պետք է տնտեսապես բարձրացնել ժողովրդի աշխատող դասին՝ գյուղացի երկրագործին և քաղաքի արհեստավորին, որոնք հասարակության հիմքն ու տնտեսական ուժն են կազմում: Նրանց վիճակը բարելավելով միայն կարելի է բարվոքել ամբողջ հասարակության տնտեսական դրությունը: Այդ նպատակի իրագործման համար նա առաջարկում է կազմակերպել վարկային և հումքի մատակարարման ընկերություններ: Մեկնաբանելով նման ընկերությունների ստեղծման տարբեր սկզբունքները՝ Գ.Արծրունին նախապատվությունը տալիս է «ինքնօգնության սկզբի վրա հիմնված ընկերակցություններին»: Նա փորձում է հայ իրականության մեջ արմատավորել «ընկերական ոգու» դաստիարակությունը՝ այն համարելով «ազգային վերածննդի» կարևոր պայման. «Քանի քաղաքակրթվում է, զարգանում է, լուսավորվում է մի հասարակություն, այնքան նա ավելի և ավելի սկսում է ըմբռնել ընկերական ոգու, ընկերակցական ուժի օգտավետության, ուրեմն ավելի էլ սկսում է ըմբռնել զանազան ընկերակցությունների հիմնելու անհրաժեշտությունը»[2]: Գ.Արծրունին գտնում էր, որ կոոպերատիվ հաստատությունները հնարավորություն կտային գնալու քաղաքակիրթ մարդկության տնտեսական ձգտումներին ու նպատակին ընդառաջ, մեղմելու հարստության և աղքատության միջև խորացող հակասությունը, հաստատելով «ընդհանրություն, մասսայի բարօրության միջին մակերևույթ»[3]: Փաստորեն, Գ.Արծրունին հասարակության առաջադիմության մակարդակը պայմանավորում է ընկերությունների զարգացման աստիճանով: Դա թերևս համապատասխանում էր ժամանակաշրջանի կապիտալիստական հարաբերությունների ձևավորման պահանջներին:

Ընկերական ոգու դաստիարակությունը ազգային վերածննդի կարևոր պայմաններից էր համարում նաև հայազգի հայտնի տնտեսագետ Ա.Արասխանյանը: Նա «Մուրճի» էջերում ոչ միայն ներկայացնում է իր մոտեցումները կոոպերացիայի հարցի շուրջ, այլև ձեռնարկում նրա գործնական իրականացումը: 1894թ. «Մուրճի» N 11-12-ում տպագրվում է նրա կողմից արհեստակցական ընկերություն ստեղծելու կանոնադրությունը, որը ենթադրում է ընկերության անդամների հավաքված դրամագլուխներով արհեստանոցների ստեղծում, որից ստացված շահույթի մի մասը տարվա վերջին պիտի բաշխվեր անդամների միջև, իսկ մյուս մասը օգտագործվեր բնակարանների, ճաշարանների, գրադարանների կառուցման նպատակով: XIX դարի Արևմուտքի տնտեսական պատմությանը հայտնի են կոոպերատիվ տնտեսաձևի կազմակերպման բազմաթիվ փորձեր տարբեր երկրներում: Ինչպես հայտնի է, Ա.Արասխանյանը պատմական դպրոցի հետևորդն էր: Եվ նրա այս ձեռնարկումը ավելի շուտ կրկնում էր գերմանացի տնտեսագետ Շուլցե-Դելիչի կոոպերատիվ միությունների փորձը՝ ինքնօգնությունը դիտելով բանվորների տնտեսական վիճակը բարվոքելու և սոցիալական ներդաշնակության հասնելու ուղիներից մեկը[4]:

Իսկ կոոպերատիվ շարժման գաղափարախոսներից մեկը՝ Ա.Բուդուղյանը, նույնացնելով տնտեսական և բնության օրենքները, փորձում է նախանշել ինքնապաշտպանության այն միջոցները, որոնք անհրաժեշտ են ազգին՝ գոյության կռվում հարատևելու, իսկ գյուղացիությանն ու բանվոր դասակարգին՝ տնտեսական կյանքում կապիտալի ուժին դիմակայելու համար: Առաջին դեպքում նա նկատի ունի «ազգի կուլտուրական ուժը», իսկ երկրորդի համար որպես այդպիսին դիտում է սպառողական կոոպերացիաների ստեղծումը՝ «որպես ինքնօգնության» և խաղաղ զարգացման, ...հասարակության տնտեսական, բարոյական ու ֆիզիկական» վերա-

---

[1] «Պսակ», 1881, N 5:
[2] «Մշակ», 1881, N 172:
[3] Նույն տեղում, 1877, N 58:
[4] «Մուրճ», 1897, N 11,12: Այդ մասին տե՛ս Ռ.Սարինյան, «Մուրճի» տնտեսագիտական դպրոցը, Ե., 2006, էջ 122-123:

կառուցման կարևորագույն միջոց[1]: Բուդուղյանը փորձում է զարգացման նոր իրադրության մեջ գնահատել կոոպերացիայի տնտեսական դերն ու սոցիալական ֆունկցիաները: Կոոպերացիան,– շարունակում է Ա.Բուդուղյանը,– ավելացնելով մասնակիցների բարեկեցությունը, կատարելագործում է նրանց բարոյական բնույթն ու դաստիարակում է նրանց մեջ հասարակայնության բարձրագույն ձևերի գաղափարը[2]: Ինչ խոսք, Բուդուղյանի դատողությունները հետևանք են կոոպերացիայի հանդեպ նրա ունեցած նախապաշարմունքի. «Կոոպերացիան հսկայական գործոն է, մեծ ուժ՝ խաղաղ զարգացման... այն բուժում է հասարակությունը ամեն կողմից՝ տնտեսական, բարոյական և ֆիզիկական: Այն համերաշխության դպրոց է»[3]: Բուդուղյանի հայացքներում կա որոշակի ռոմանտիկական նրբերանգ: Կոոպերացիան համարելով մասնավոր սեփականության հակակշիռ՝ այն դիտում է որպես կարևոր գործոն սոցիալական արդարության հասնելու գործում: Իր աշխատանքներում տնտեսագետը բազմիցն անդրադարձ է կատարել հասարակության սոցիալական բարեկարգման հարցերին: Հասարակությունը տրոհված էր երկու հակամարտ դասակարգերի միջև, խորացել էին սոցիալական ներհակությունները, հարստությունը և աղքատությունը բևեռացված էին, ահա այն նախադրյալները, որոնք պայմանավորում են կոոպերատիվ կազմակերպությունների առաջացումը: Աշխատավոր մասսան պետք է միայն լավ հասկանա և յուրացնի այն հասարակ ճշմարտությունը,- գրում է Ա.Բուդուղյանը,- որ իր անհաջողության պատճառը անմիաբանությունն ու բաժան-բաժան լինելն է: ... կոոպերացիան այն զորեղ միջոցներից մեկն է, որի շնորհիվ կարելի է ազատվել անիրավության և ճորտության ցանցի կապանքներից[4]: Իսկ մի այլ տեղ նա նկատում է, որ «Կոոպերատիվները կազմակերպվում են նրա համար, որ աշխատավորներն իրենց սեփական ուժերով հիմնեն իրենց սեփական տնտեսական ձեռնարկությունները, հակառակ... կապիտալիստների հիմնածների»[5]:

Ա. Բուդուղյանն, ըստ էության, լինելով կոոպերատիվ ռեֆորմիզմի տեսության կողմնակից, գաղափարական ընդհանրություններ ունի ուտոպիստ սոցիալիստների ներկայացուցիչների մտայնության հետ: Այս առումով, ժամանակագիրներից մեկը նկատում է, թե «Ա.Բուդուղյանն իր ապրումներով ու խոհերով մեր իրականության մեջ նմանվում է ֆրանսիական Շարլ Ֆուրյեին, որը երազում էր կապիտալիստական հասարակարգում տառապող մարդկությանը տանել դեպի երջանիկ ու ներդաշնակ կյանք... այդ տեսակետից նա մեր կյանքի համար եղել է մի փոքրիկ Շարլ Ֆուրյե»[6]:

Ինչ խոսք, կոոպերացիան աշխատանքի կազմակերպման նպատակահարմար միջոցներից մեկն է, որտեղ գործում է «մեկը բոլորի համար, բոլորը մեկի համար» սկզբունքը: Այն որոշակի դրական դեր խաղացել է: Լինելով կոլեկտիվ սեփականության կազմավորման սկզբնական ձև, այն որոշակի ռեակցիա էր կապիտալիզմի սոցիալական ու տնտեսական ներհակությունների հանդեպ: Կոոպերացիան ներկայացնում էր սոցիալական որոշակի խավերի տնտեսական ու բարոյական ընդհանրությունները:

1900-ական թվականներից սկսած՝ հայ իրականության մեջ սկսում են հիմնվել առաջին կոոպերատիվները[7]:

Կոոպերացիայի հայտնի տեսաբան Վահան Տոտոմյանցը այն դիտում էր ոչ թե լոկ որպես միջոցի, որը կոչված է վերացնելու սոցիալական ներհակությունները, այլև որպես մի հաստատության՝ իրականացնելու մի շատ ավելի լայն ֆունկցիա, իր քաղաքակրթական տրվածքի մեջ ծառայելու որպես «...ամենէն զօրաւոր միջոցը ազատագրրուելու օտար տիրապետութենէ.

---

[1] Ա.Բուդուղյան, Սպառողի հավատամքը, Ս.Պետերբուրգ, 1904, էջ 4:
[2] Նույն տեղում, էջ 5:
[3] Նույն տեղում:
[4] «Գյուղատնտես», 1909, N 2, էջ 24:
[5] Նույն տեղում, N 14, էջ 210:
[6] «Գյուղատնտես», 1916, N 7, էջ 106:
[7] Այդ մասին հանգամանորեն տե՛ս Կ.Պ.Կարագյան, Սպառողական կոոպերացիայի ծագումը և զարգացումը Հայաստանում, Ե., 1957:

գործառոր միջոց՝ ազգային վերածնունդի»[1]: Տնտեսագետը Հայաստանի ապագան կապում է կոոպերատիվների հետագա զարգացման հետ: Տոտոմյանցի համար կոոպերացիան ներդաշնակ շահերով ու փոխադարձ ծառայություններով սկզբունքի վրա խարսխված ասոցիացիա է և կոչված է արմատավորելու և իրագործելու «հասարակական համագործակցության» և «սոցիալական պարտքի» գաղափարները, նախանշելու մարդկության զարգացման «տնտեսական հարաբերությունների բարձրագույն, ներդաշնակ» ուղին: «Իրականում,– գրում է Վ.Տոտոմյանցը,– կոոպերացիան և հատկապես սպառողականը, իր կազմում ներգրավելով բոլոր ուղղությունների ու դասակարգերի մարդկանց, հանդիսանում է հանդուրժողականության, հաշտակյացության և տնտեսական գործերը համատեղ վարելու հիանալի դպրոց: Սպառողական կոոպերացիան ձգտում է դասակարգերի համագործակցության, տնտեսական ներդաշնակության: Այն ապավինում է ոչ թե արտադրողի տնտեսական շահի, ոչ թե նեղ դասակարգային գիտակցությանը, այլ համամարդկային համերաշխությանը: Կոոպերացիայի իդեալն է հանդիսանում ոչ թե պայքարը գոյության համար և ոչ էլ դասակարգերի պայքարը, այլ կյանքի համար միությունը»[2]: Դժվար չէ նկատել տնտեսագետի ըմբռնումների ծրագրային շեշտը, որն ակնկալում է կապիտալիզմի բարենորոգչական բովանդակություն՝ սոցիալական տարբեր խմբերի տնտեսական համագործակցություն և միասնություն: Նրա կարծիքով հասարակությունը սպառող անհատների գումար է, իսկ կոոպերացիան հենց այն հաստատությունն է, որը պիտի փոխակերպեր կապիտալիզմի դիմապատկերը: Կոոպերացիան ընձեռում է համագործակցության հնարավորություններ ունեցող անդամների հաշվին մեծացնել նաև չունեցողների սպառումը: Սա, Տոտոմյանցի կարծիքով, համագործակցության հենց այն ձևն է, որը ենթադրում է ոչ միայն ինքնօգնություն և փոխօգնություն, այլ նաև փոխադարձ պատասխանատվություն[3]: Տոտոմյանցի մոտ կոոպերացիան դառնում է հասարակական առաջընթացի արժեորման ընդհանուր չափանիշ: Նա մի կողմից հասարակության կոոպերացման միջոցով նպատակ է հետամտում որպես սպառողների ստեղծել միատարրություն, մյուս կողմից չի նկատում, որ տարբեր տնտեսական ուժերի համագործակցության իր ծրագիրը, ի վերջո, պետք է հանգեցնի սոցիալական շերտավորման: Տարբեր սոցիալական խմբերի համագործակցությունը միանգամայն հնարավոր է, քանի որ նրա կարծիքով կոոպերացիան անկուսակցական, վերդասակարգային կազմակերպություն է[4]: Վ.Տոտոմյանցը միաժամանակ գտնում է, որ կոոպերատիվիզմը, որպես հասարակական շարժում, էապես տարբերվում է սոցիալական մյուս ուղղություններից, որը պայմանավորված է այն տարբերությամբ, որ գոյություն ունի կապիտալիստական և կոոպերատիվ հիմունքներով կազմակերպված սկզբունքների միջև: Եթե, մի կողմից, դա դրսևորվում է այն բանում, որ իբր վերացվում է շահագործումը, ապա մյուս կողմից՝ փոքրամասնության կողմից մեծամասնության հաշվին հարստանալու և շահույթի վերացման մեջ: Հարցն այդպես էին դնում կոոպերատիվ ռեֆորմիզմի գրեթե բոլոր ներկայացուցիչները:

Ակներև է, որ կոոպերատիվիզմի տեսաբանների համար ավելի շուտ ելակետ են եղել արտադրական և սպառողական կոոպերացիաների միջոցով հասարակության սոցիալական խաղաղ վերակառուցման հնարավորության ակնկալությունները:

---

[1] Վ.Տոտոմյանց, Կոոպերացիա. համառոտ ձեռնարկ, Սոֆիա, 1933, էջ 142: (Այդ մասին հանգամանորեն տե՛ս Մ.Մամիկոնյան, Վահան Տոտոմյանցի տնտեսագիտական հայացքները, Երևան, 2001, էջ 71):

[2] Тотомянц В., Теория, история и практика потребительской кооперации, М.,1918, с.348.

[3] Тотомянц В., Основы кооперации, Берлин, 1923, с.55-62.

[4] Նույն տեղում, էջ 296: